



ԳՆՅԼ Մ. ՎՐԻ. ՃԵՐՆՃՅԱՆ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ՝

ԵՐԱՆԱՇՆՈՐԸ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՍՄԱՆ ԵՎ ԹԱՂՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ*

1954 մայիսի 31-ին, երկուշաբթի երեկո, ժամը 8.30-ին, պատվիրակությունը ներկա գտնվեցավ համերգի մը**, որ տեղի ունեցավ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին մեջ: Համերգին հանդես եկավ Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը՝ ղեկավարությամբ Ի. Խարաջանյանի: Մենակատարներն էին վաստակավոր արտիստ Ավագ Պետրոսյան (երգիչ) և Ա. Վարդանյան (ջութակահար): Հայտագիրը կազմված էր Ալեքսանդր Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի և Արամ Խաչատրյանի կտորներով: Սրահը բերնե-բերան լեցուն էր երաժշտասեր հասարակությամբ, որ տենդազին ծափահարեց Անուշավան Տեր-Ղևոնդյանը, որ կզտնվեր ունկնդիրներուն մեջ: Անուշավան Տեր-Ղևոնդյան ևս իր կարգին և անձամբ շնորհավորեց իր կտորը կատարողն ու ղեկավարը և ստեղծեց շատ խանդավառ մթնոլորտ սրահին մեջ:

Հունիսի 2-ին (1954), չորեքշաբթի օր, երեկոյան ժամը 7.30-ին, պատվիրակությունը ներկա եղավ «Անուշ» օպերային** Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և

բալետի թատրոնի սրահին մեջ: Սարոյի դերը ստանձներ էր Գ. Գաբրիելյան, որ այնքան ապրումով կատարեց իր դերը: «Անուշ» օպերան հաճախ կներկայացվի Հայաստանի մեջ, որովհետև շատ սիրված է: Յուրաքանչյուր ներկայացում հատկացված է Հայաստանի զանազան շրջաններու բնակիչներուն, որոնք խուսնեղում կուզան դիտելու համար հալուն կյանքեն առնված տխուր դրաման, հավերժացած Հովհաննես Թումանյանի գրիչով և Արմեն Տիգրանյանի երաժշտությամբ:

Հունիսի 4-ին (1954), ուրբաթ օր, պատվիրակությունը առաջնորդվեցավ դեպի Գառնի և ապա Գեղարզ՝ այցելելու համար մեր անցյալի այդ երկու փառավոր կոթողները, զոր մեր նախնիքները հրաշակերտեր են:

Գառնիի ամրոցը կառուցված է անառիկ բարձունքի մը վրա, ուրկե վարը ուղղված նայվածք մը գլխու պտույտ կպատճառն: Վարեն կհոսի Ազատ զետրը: Այսօր Գառնին ավերակույտ մըն է, որուն սակայն ամեն մեկ գեղաքանդակ քարը պատմություն մը ունի ավանդելու մեզի մեր անցյալ փառքերեն ու մշակույթեն: Գառնիի ավերակներուն մեջ կշարունակվի պեղումը, որմե ի հայտ եկած է շատ նուրբ և գեղեցիկ խճանկար (մոզաիկ) մը, որ սքանչացումի առարկան է բոլոր այցելուներու:

Գառնիեն ուղևորվեցանք դեպի Գեղարզա վանքը, որուն մոտեն կհոսի Ազատ զետր հսկայական թափով մը, ժայռերու և խուփե-

* Սկիզբը ամսագրի 1954 թվականի № IX-ում:

** Սույն երկու երեկույթները հակամայս մոտցված են թվականի կարգով գրվել: Ստիպված եղանք զանոնք զետեղել հոս, մեր օրագրությունը լրիվ ըլլալու համար,— Գ. Մ. Վ. Ճ.

րու մեջ են: Գեղարդա վանքը խորհրդազգած հոգիներու վայրն է, ուր ընտրած են առանձնանայ ճգնազգայաց մեր նախնիք՝ հոգավու կատվելու համար աներևույթ զորության հետ, որուն համար կանգնած են, թերևս աշխարհի համար տակավին անծանոթ հրաշալիքներն մին՝ Գեղարդա սուրբ տաճարը, որուն շուրջ կան բազմաթիվ եկեղեցիներ: Բուն տաճարը վիմափոր է վերին վար: Զայն կերտողը սկսած է փորել նախ տաճարին գմբեթը, ուրկե փորելով իջած է մինչև եկեղեցվույն նավը և ներքին մասերը: Վանքը ունի վանահայր և մնայուն քահանա: Ուխտավորներ կուգան հեռավոր վայրերի: Մեր այցելության առթիվ հոն գտանք մեկ-երկու կիներ, որոնք հետիոտն եկած էին Երևանեն՝ կատարելու համար իրենց ուխտը: Արտասահմանի օտար պատգամավորություններ ևս այցի կուգան Ս. Գեղարդ՝ տեսնելու համար զարմանահրաշ այդ տաճարը: Տաճարին կից և անոր մերձակայքը կան մեկե ավելի խաչքարեր ու ճգնարաններ: Վերջինները փորված են ժայռի կամ լեռներու կողերուն մեջ:

Վանահայրը պատվիրակության համար մորթից մատաղցու ոչխար մը, որ բերվեցավ սեղան: Սեղանին բարիքները բացվեցան մեր առջև կեսօրե ետք ժամը 5.30-ին: Հացկերույթը տեկց մինչև ուշ առտին: Սեղանին կնախագահեր Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյան, որ արտասանեց դեղեցիկ բաժակաճառ մը՝ նվիրված զույգ Հայրապետական Աթոռներու անասանության և միասնության, և առաջարկեց երգել Ս. Էջմիածնի ձոներդ-շարականը՝ «Էջ Միածինն ի Հօրէ»: Սրբազան հոր բաժակաճառը ողջունվեցավ որոտընդոստ ծափերով և հոտընկայս երգվեցավ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը: Սրբազան հոր բաժակաճառին պատասխանեց՝ հանուն Ս. Էջմիածնի շնորհակալություն հայտնելով՝ պրոֆ. Աշոտ Աբրահամյան, և բարեմայիթեց արևշատություն սրբազան հոր և անասանություն Կիլիկիո Ս. Աթոռին: Բաժակաճառեր հաջորդեցին մեկը մյուսին, որոնց առանցքը կկազմեին Ս. Էջմիածինն ու Կիլիկիո Ս. Աթոռը:

Գիշերը ուշ առեն պատվիրակությունը վերադարձավ Երևան, ուր ներկա եղավ «Իավիթ-Քեկ» օպերային՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի սրահին մեջ: Սույն օպերան եղանակավորված է հանգուցյալ Արմեն Տիգրանյանի կողմի: Այս օպերային մեջ էր, որ առաջին անգամ հանդիպում ունեցանք Եգիպտոսեն ներգաղթող և ամբողջ Սովետական Միու-

թյան մեջ հռչակված տաղանդավոր երգչուհի Գոհար Գասպարյանի հետ, որուն հետ ունեցանք մտերմիկ տեսակցություն երեկույթին ետք: Հոն էր նաև Տաթևիկ Սազանդարյանը, որուն մասին տարիներով խոսեցան սովետական մամուլն ու հանդիսականները՝ իբր տաղանդավոր «մեցցո սուպրանո» երգչուհի:



Հունիսի 5-ին (1954), շաբաթ գիշեր, ժամը 7.30-ին, պատվիրակությունը ներկա եղավ «Ալմաստ» օպերային, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի սրահին մեջ: Երգի և կատարումի իշխանը՝ Պավել (Պողոս) Լիսիցյան կկատարեր Թաթևիկ իշխանի դերը, իսկ իշխանուհիի դերը՝ Տաթևիկ Սազանդարյան: Պավել Լիսիցյան լիրիկ բարիտոն է, որուն տաղանդը շնայած իր վայելած մեծ համբավին, տակավին ծաղկման մեջ կգտնվի և կհուսադրե մեծամեծ նվաճումներ: Պավել Լիսիցյանի անունը, Սովետական Միության երկիրներեն զատ, մեծապես ծանոթ է Գերմանիո, Ավստրիո: Չեխոսլովակիո, Հունգարիո, Ռումանիո, Բուլղարիո, Լեհաստանի և Դանիայի երաժշտական լայն շրջանակներուն, որոնք կնշեն երգիչի հրաշալի իր ձայնը, դպրոցը և կատարողական վարպետությունը: «Ալմաստ» օպերայի մեջ պատվիրակությունը ակնանատես եղավ խաղարկությանը երեք մեծ արվեստագետներու, — Պավել Լիսիցյանի, Գոհար Գասպարյանի և Տաթևիկ Սազանդարյանի, — որոնք բախտավոր դիպվածով մը միաժամանակ կգտնվեին Հայաստանի մեջ, որովհետև համամիութենական իրենց համբավը զիրենք կբաժնեիր իրարմե՝ կատարելու համար երաժշտական ելույթ միութենական թե օտար երկիրներու մեջ:



Հունիսի 6-ին (1954), կիրակի երեկո, ժամը 7.30-ին, պատվիրակությունը ներկա եղավ Գ. Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնի մեկ բեմադրությունը, Հակոբ Պարոնյանի «Պաղտասար անթառ» կատակերգության՝ երեք արարվածով: Ներկայացման առանցքը կկազմեր ժողովրդական արտիստ և համբավավոր դերասան Զ. Ներսիսյանը՝ իր անթերի և բնական կատարումով: Մյուս դերակատարներն էին Ա. Ասրյանը, Գ. Գաբրիելյանը, Գ. Հարությունյանը, Վ. Մարգունին, Վ. Ստեփանյանը, Թ. Դիլաքյանը, Ա. Եղյանը, Ա. Կոթիկյանը և Վ. Միրիջանյանը: Բեմադրությունը կղեկավարեր ժողովրդական արտիստ և Ստալինյան մրցանակի լատրեատ Վ. Աճեմյանը, իսկ նկարիչն էր ժողովրդական նկարիչ և արձանագործ Ա.

Սարգսյանը: Հոն հանդիպեցանք նաև ա՛յլ ժողովրդական արտիստներու, որոնց մեջ՝ մասնավորապես՝ ժողովրդական արտիստ և համբավվող դերասան Ավետյանի, որ «Պեպո» ֆիլմին մեջ Զիմզիմովի դերը խաղացած է:

Հունիսի 7-ին (1954), երկուշաբթի օր, երեկոյան ժամը 8-ին պատվիրակությունը ներկա գտնվեցավ հրգելու կախարդանքին տիրացած տիկին Գոհար Գասպարյանի ունեխալին, որ տեղի ունեցավ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճին մեջ, ներկայությամբ երաժշտասեր հոծ հասարակության մը, որ բուն ծափահարեց թուլիշ հայ երգչուհին: Եզրպատուեն ներգաղթող այս տիկինը՝ Մոսկվայի մեջ հետևած է ձայնամարդության դասընթացքին և կատարելապես տիրացած է հրգելու արվեստին, որ հիացմունքի կմդև ամենեն նրբարվեստ արվեստագետներն ու երաժշտական քննադատներն անգամ: Անոր անունը ծանոթ է միութենական երկիրներու թև եվրոպայի վաճառական երկիրներու երաժշտական շրջանակներուն, որոնք մամուլով ու բեմով դրվատիքը կհյուսեն անոր՝ վեր առնելով անոր ձայնին ճկունությունն ու կատարողական արվեստը: Հաճախ կտարվիս մտածելու, թե երգողը սոխակ մըն է, որ կզեղզեղե:

Մոսկվայի Պետական օպերայի վարչությունը գնահատելով անոր երաժշտական կարողությունները, պահանջած է զայն Երևանի Պետական օպերայի վարչությունեն, որպեսզի անիկա հանդես գա Մոսկվայի Պետական օպերային մեջ, բայց Երևանի վարչությունը ընդդիմացած է՝ առարկելով, որ անիկա պետք է մնա Երևան՝ իր ներկայությամբ և համերգներով փայլ տալու համար հայոց մայրաքաղաքի երաժշտական մշակույթին: Տիկին Գոհար Գասպարյան ևս նախընտրած է մնալ Երևան, ուր առաջադրած էր ներգաղթել Եզրպատուեն՝ վերջ տալու համար գաղթականի դորշ կյանքին: Մոսկվա համակերպած է և տիկին Գոհար Գասպարյան կգործե Երևանի մեջ, հարկ եղած պարագային այցելելով միութենական երկիրներ, կազմակերպելու համար համերգներ:

Ռեսիտալին հայտագիրը կազմված էր հայ և օտար երգահաններու դասական և արդի ստեղծագործություններեն: Հայտագիրի գործադրութենեն հետք նոր հայտագիր մը ևս կազմվեցավ տեղվույն վրա՝ երաժշտասեր հասարակության պահանջած երգերով, որոնց սիրով ընդառաջեց սիրված և հարգելի երգչուհին:

Հունիսի 8-ին (1954), երեքշաբթի, կեսօրի հետք ժամը 2.15-ին պատվիրակությունը ընդունվեցավ Հայաստանի երիտասարդ Վարչապետին՝ Անտոն Քոչինյանի կողմի: Հանուն պատվիրակության շնորհակալության խոսք ըրավ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանը, որուն պատասխանեց Հայաստանի Վարչապետը բարիգալուստի ազնիվ խոսքերով: Խոսակցության կարգին երբ հարց տրվեցավ ներգաղթի մասին, Նորին Վսեմություն Վարչապետը պատասխանեց. «Ամեն պտուղ իր հասունացած ժամանակը անուշ կլինի», թեև հայտնեց նաև, թե ներգաղթի հարցը օրակարգեն բնավ չէ ջնջված:

Ընդունելությունը եղավ շատ սիրովի և պատվիրակությունը բաժնվեցավ Նորին Վսեմություն Վարչապետին շատ զոհ տպավորությամբ:

Նորին Վսեմություն Վարչապետի ունկընդորոթենեն հետք Հայաստանյայց Եկեղեցվո գործերու խորհուրդի նախագահ՝ պարոն Հրաչյա Գրիգորյան առաջնորդեց պատվիրակությունը դեպի Հայկական խորհրդարանի շենքը: Պատվիրակությունը հիացմունքով անցավ մարմարապատ սենյակներեն և մտավ մեծ դահլիճը, որ ներքնապես ևս բարաշեն է և ամբողջությամբ քանդակազարդված հայկական մանրանկարչական մոտիվներով:

Նույն օր, գիշերին, տեղի ունեցավ թրդթակիցներու հանդիպումը պատվիրակության անդամներուն հետ, որոնք հազորդեցին իրենց տպավորությունները Հայրենիքի վերելքի մասին:

Նույն օրը, երեկոյան ժամը 10.30-ին տրվեցավ ողջերթի սեղան մը ի պատիվ պատվիրակության անդամներուն: Սեղանի վրա խրախճանքը տեկեց մինչև առավոտյան ժամը 4: Պատվիրակության անդամները այդ գիշեր բնավ չքնացան, որովհետև մեկ-երկու ժամ հետք անոնք օդանավ պիտի առնեին և թռչեին դեպի Մոսկվա: Սեղանին կմասնակցեին եկեղեցական և պետական բարձրաստիճան դեմքեր, գրագետներ, արվեստագետներ և հասարակական գործիչներ: Սեղանի վրա շնորհակալության խոսքերով ելույթ ունեցավ դարձյալ Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյան, որուն ի պատասխան արտահայտվեցավ Հայաստանյայց Եկեղեցվո գործերու խորհուրդի նախագահ՝ պարոն Հրաչյա Գրիգոր-

յան: Խոսք առին նմանապես Վարպետը, Դերենիկ Դեմիրճյան, Հրաչյա Քոչար և ուրիշներ, ինչպես նաև պատվիրակության եկեղեցական և աշխարհական անդամներն ումանք: Անոնք իրենց բաժակաճառերով մաղթեցին բարգավաճում Սովետական Հայաստանի, պայծառություն Ս. էջմիածնի և բարօրություն հայ ժողովուրդի: Երգով և արտասանությամբ հանդես եկան Հայաստանի արվեստագետները, որոնք սեղանին ուրախությունը հասցուցին իր լրումին:

Պատվիրակությունը Սովետական Հայաստանի արևաշող մայրաքաղաքին՝ Երևանի մեջ մնաց 17 օր: Ոչ մեկ օր անոր ճակատը չմթափեցավ Հայաստանի արևին տակ, եթե չհաշվենք երանաշնորհ Հայրապետի օժման և թաղման համատարած սուգի օրերը: Հայաստանի մեջ այլևս անցած է սուգի և շիվանի շրջանը: Ուրախություն կտիրապետե հոն և ամեն այցելու պարտի մասնակից ըլլալ այդ ուրախության, և մենք լիովին վայելեցինք հայուն ավանդական հյուրասիրությունը հայկական երկնակամարի և հայ պետության հավանիին տակ:



Հունիսի 9-ին (1954), չորեքշաբթի օր, առավոտյան ժամը 7.20-ին պատվիրակությունը մեկնեցավ Երևանի «Ինտուրիստ» հյուրանոցն դեպի օդակայան, ուր ողջերթի համար եկած էին Ս. էջմիածնի միաբանությունից ներկայացուցիչներն ու ԱՕԿՄ-ի բոլոր պաշտոնյաները, Հայաստանյայց Եկեղեցվո գործերու խորհուրդի նախագահ՝ Հրաչյա Գրիգորյան, Կարո Ղաֆադարյան և բազմաթիվ մտավորականներ: Հուզիչ էր բաժանման տեսարանը:

Օդանավը Երևանեն ճամբա ելավ առավոտյան ժամը 9.30-ին, երևանյան ժամով, և փոքր ժամանակի մը համար հաջորդաբար իջնելով Սուխումի, Ռոստովի և Խարկովի օդանավակայանները՝ նույն օր երեկոյան, տեղական ժամով ժամը 10.30-ին հասավ Մոսկվա, ուր պատվիրակությունը դիմավորվեցավ Մոսկվայի հայոց հոգևոր հովիվին՝ արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տ. Հարությունյանի և բարեշնորհ Անդրանիկ սարկավագ Գալամբարյանի կողմն և առաջնորդվեցավ Մոսկվայի «Մետրոպոլ» հյուրանոցը, ուր մնաց մինչև իր մեկնումի օրը, հինգ օր:



Պատվիրակությունը հանգստանալու համար մեկ օրվան դադարե մը ետք, հունիսի 11-ին (1954), ուրբաթ օր այցելեց Զագորակ,

որ կգտնվի Մոսկվային 120 կիլոմետր դուրս: Զագորակ կրոնական ճեմարան մըն է, ուր կուսանին 180 սաներ՝ պատրաստվելու և նվիրվելու համար կրոնական ասպարեզի: Պատվիրակությունը պատեցավ հաստատության զանազան բաժանմունքներն ու եկեղեցին, և հոգիով հրճվեցավ տեսնելով բարգավաճ կրոնական ուստան մը, ուր կպատրաստվին երիտասարդ ազնիվ հոգիներ՝ Աստուծո մաքուր անդաստանին ծառայության համար:

Պատվիրակության մեկ մասը, գլխավորությամբ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանի, նույն օր ընդունվեցավ Համայն Ռուսիո Ռուս Օրթոդոքս Եկեղեցվո Պետ Ալեքսի Պատրիարքի կողմն, որուն հետ ունեցավ շատ սիրալիր և մտերմիկ տեսակցություն: Սրբազան Հովվապետը անսխալ կարտասանե տերունական աղոթքը հայերեն լեզվով: Անիկա մտոնե ծանոթ է Հայ Ազգի բազմաթիվ զավակներուն, որոնք տպավորած են զինք որպես աշխատունակ և ստեղծագործ ժողովուրդի մը ներկայացուցիչները: Անիկա խորապես վրշտակրած է մահվանը վրա Հայ Ազգի երանաշնորհ Հովվապետին, որուն հետ հաստատած էր եղբայրական մտերմությունը և գործակցությունը: Պատվիրակությունը շնորհակալություն հայտնելով Սրբազան Հայրապետի ազնիվ խոսքերուն համար և արևատություն մաղթելով իրեն՝ բաժնվեցավ Ռուս Օրթոդոքս Եկեղեցվո Վեհապալարեն, համոզված՝ որ քույր եկեղեցվո մը տաքուկ սիրտը կբաբախե հոն:



Հունիսի 12-ին (1954), շաբաթ օր, կեսօրին առաջ ժամը 10-ին, պատվիրակությունը այցելեց Կրեմլի պատմական բաժինը, առաջնորդությամբ Նիկիտա Խրուշչովի Սմիռնովի, որ Կրոնական խորհուրդի ավագ աշխատակից է: Ս. էջմիածնի կողմն պատվիրակության կրնկերակցեր «էջմիածին» պաշտոնաթերթի խմբագիր պրոֆ. Աշոտ Աբրահամյան, որ միանգամայն կկատարեր թարգմանի պաշտոն:

Կրեմլ կարելի է այցելել մասնավոր արտոնությամբ: Պատվիրակության ժամանումեն առաջ այցելուններուն երկար շարանը տեղ գրաված էր Կրեմլի մուտքին առջև: Պատվիրակության հատուկ պատիվ ընծայվեցավ՝ երբ բոլոր այցելուններն առաջ առաջնորդվեցավ Կրեմլի պատմական պալատեն ներս, որուն մուտքի դռան առջև ողջունվեցավ թանգարանի պատասխանատու

անօրենին կողմնի Կրեմլի պատմական մեծ մասը այժմ մաս կկազմեն Հնագիտական վարչությունը: Պատվիրակությունը նախ առաջնորդվեցավ ընդարձակ այն սրահը, ուր տեղի ունեցած են ազգային ընդհանուր ժողովները: Այս սրահին անմիջականորեն կից կգտնվի Սովետական Միության պառլամենտը, ուր տեղի կունենար միջազգային սենտիկաներու ներկայացուցիչներուն համաժողովը: Այս ժողովին պատճառով պատվիրակությունը շիրջավ այցելել պառլամենտը: Պատվիրակությունը ապա առաջնորդվեցավ ցարերու պալատին բոլոր հարկաբաժինները, որոնք պահված են այնպես, ինչպես որ էին ցարերու իշխանության օրով: Պալատին ամենեն հին մասը Իկոր իշխանի հարկաբաժինն էր: Իկոր իշխանը ռուսերու Վարդանն է, որ կուլեցավ թաթարներու դեմ՝ իր ազգի ազատության համար: Պալատին ամբողջ հարստությունը, որ դարերու ընթացքին հավաքված է, մեկտեղված է ընդարձակ սրահի մը մեջ, ուր առաջնորդվեցավ պատվիրակությունը պալատի այցելութենեն հետք: Պատվիրակությունը 3—4 ժամերու տևողության ընթացքին տեսավ մեծ ու փոքր ադամանդներ, ոսկի և թանկագին քարեր, առանձին կամ հեռավալ ավետարանի, սկիհի, խաչի, քահանայապետական թե արքայական ոսկեծամուկ զգեստներու, պանակներու և շքանաններու, եպիսկոպոսական գավազաններու և արքայական գալխոսներու, սուրբերու, դաշույններու, ատրճանակներու, վահաններու և այլ պատերազմական թե ընտանեկան գործիքներու և առարկաներու վրա: Պատվիրակությունը տեսավ ամեն դարու հատուկ իշխանական, ցարական թե եկեղեցական զգեստներ, որոնք համակ գործված էին մարգարիտներով և այլ թանկագին քարերով: Աշխարհի գանազան կողմերեն կուտակված ոսկին և թանկագին քարերը շէին խնայված նույնիսկ արքայական կառքերու և ձիերու կազմածներուն վրա, որոնք ևս կցուցադրվեին այդ ընդարձակ սրահին մեջ:

Պատվիրակությունը իր հիացումն ու գնահատությունը արձանագրեց այն տոմարին մեջ, որ իրեն ներկայացվեցավ թանգարանի պատասխանատու անօրենության կողմնի: Արձանագրությունը ստորագրեցին պատվիրակության եկեղեցական և աշխարհական բոլոր անդամները:

Պատվիրակությունը ամենեն հետք առաջնորդվեցավ դեպի Կրեմլի պալատին հարակից շենքերը, որոնց մեջ ի մասնավորի աչքի կգարնեին երեք հսկայական մեծու-

թյամբ եկեղեցիներ, որոնց ոսկեզօծ և սրածայր զմբեթները կպսպղային արևի ցուրեբրուն տակ: Անոնց դռները բաց էին այցելուներու առաջ, որոնք կուգային միութենական թե արտասահմանյան երկիրներէ: Պատվիրակությունը առաջնորդվեցավ Ս. Վլադիմիր տաճարեն ներս, ուր նորոգություններ կկատարվեին՝ պետութան հաշվույն: Այս տաճարին մեջ կգտնվին ռուս մեծ քահանայապետներու և իշխաններու դամբարաններ՝ իրենց անաղարտ մնացած արձանագրություններով: Այս տաճարին մեջ է, որ ցարեր կատանային իրենց թագը և թագավոր կհռչակվեին Համայն Ռուսիո Պատրիարքին կողմն, որուն գահին քով կգտնվեին ցարին գահ՝ երկուքն ևս ամպհովանիով ծածկված: Դռան քով կգտնվի երրորդ աթոռ մը, նույն ձևով, որ տրամադրված էր Մոսկվայի ռուս միտրոպոլիտին: Պատվիրակությունը սքանչացումով դիտեց տաճարին զանազան մասերը և շերմեռանդությամբ համարուրեց անոր երեք խորաններուն սրբատաշ և օձյալ սեղանները: Այս տաճարին մեջ պատվիրակության անդամներեն տողերս ստորագրողին խնդրանք եղավ, թանգարանի տնօրենին և Կրոնական խորհուրդի ավագ աշխատակից՝ Նիկիտա Իվանովիչ Սմիռնովի կողմն՝ երգելու հայկական մեղեդի մը կամ շարական մը: Անոնց փափագին զոհացում տրվեցավ «Ուրխ լեր» շարականով:

Նույն օրը, երեկոյան ժամը 7.30-ին, պատվիրակությունը ներկա եղավ օպերայի մը, որ վերցված էր ռուս ազատագրական կյանքի: Դերակատարներեն ամենեն ամելի ուշագրավն էր ռուսազգի հայտնի արվեստագետ-երգիչ Զուլտով, որ վկատարեր վրուչը աշուղի դերը: Ներկայացումը վկատարվեց Մոսկվայի մեծագույն օպերային մեջ, որ կգտնվեին Կարմիր հրապարակի և մեծ իջևանած հյուրանոցին շատ մոտիկը: Օպերայի դերասանները սովետական երկիրներու լավագույն տարրերն են, որոնք հավաքված են Մոսկվա: Անոնց մեջ կգտնվին նաև երկու հայեր: Ներկայացման ընթացքին բեմ բարձրացան ավելի քան 4—500 հոգի, որոնք մեծ հասկացողությամբ կատարեցին իրենց դերերը: Երաժշտասեր հասարակություն մը լեցուցած էր սրահը, որ ուներ ութհարկանի և բոլորաձև օթյակներ:



Հունիսի 13-ին (1954), կիրակի օր, պատվիրակությունը պատեցավ Մոսկվայի զանազան տեսարժան վայրերը՝ առաջնորդությամբ

«Էջմիածին» ամսագրի պատասխանատու խմբագիր պրոֆ. Աշոտ Գ. Աբրահամյանի, որ պատվիրակության հետ մնաց Մոսկվա մինչև անոր մեկնումը Մոսկվային:

Հայկական գաղութը իր մեջ կհաշվի 60—70 հազար հոգի: Գաղութին հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյան, որ պատվիրակության մատուց անգնահատելի ծառայություններ՝ երբ անիկա հասավ Կիևեն Մոսկվա: Սիրված և հարգված հոգևորական մըն է անիկա, որ հակառակ իր հառաջացած տարիքին՝ կվազի հոն, ուր պարտականությունը կկանչի զինք: Անոր կօգնեն Անդրանիկ և Հենրիկ ավագ սարկավագներ, որոնք Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի տեսչության կողմն զրկված են Մոսկվա՝ ուսանելու համար: Գաղութը իր մեջ կհաշվի հայտնի գիտնականներ, ակադեմիկոսներ, քաղաքական և ղեկավորական դեմքեր, գրադեմներ, բժիշկներ, արվեստագետներ, համալսարանական ուսանողներ և աշխատավորներ: Գաղութը, հակառակ իր փվական նվազության, կվայելի հարգանք՝ իր որակին համար:

Քաղաքին եռուզեռը և երթևեկը դյուրացնելու համար շինված է ստորերկրյա մետրո մը, որ կհանդիսանա աշխարհի մեծագույնը և ամենեն վանտնավորը, ինչպես հավաստիացուցին մեզի Փարիզի և Ամերիկայի մետրոները տեսնողներ: Մետրոն երկհարկ է և ունի 125 մետր խորություն: Անիկա կերկարի քաղաքին զբեթի մեկ ծայրին մյուսը: Մաքրությունն ու կանոնավորությունը հատկանշական գիծերն են մետրոյին, որոնք ամեն մեկ հարկն ու վայանը ունի առանձին ճարտարապետական ոճ և գրավություն մը: Ոստիկան և ոստիկանուհիներ կը ըջազաքին ամբողջ գիծի երկայնքին՝ հակելու համար կարգապահության և երթևեկի անվտանգության:

Պատվիրակությունը մեծ կամուրջ են անցնելով ուղղվեցավ դեպի Մոսկվայի նորակառույց համալսարանը, որ 38 հարկի վրա բարձրացած հակայական շենք մըն է, և որ իր մեջ կրնա պարկուհել 20.000 հոգի: Համալսարանի մեջ կուսանին ամենազգի ուսանողներ, որոնք ձրի ուսանելի զատ՝ կստանան նաև ամսական որոշ թոշակ մը: Անդրանիկ և Հենրիկ սարկավագներ կստանան, յուրաքանչյուրը, ամսական 240 ռուբլի:

Պատվիրակությունը ապա այցելեց Մոսկվայի պատկերասրահը, ուր կցուցադրվին հին ու նոր, միջազգային և սովետական նկարիչներու ստեղծագործությունները: Ամենազգի նկարիչներու տարբերություն մեջ

կգտնվեին նաև Սովետական Հայաստանի հայտնի նկարիչ Մարտիրոս Սարյանի նկարներն ոմանք: Նկարները դասավորված էին ժամանակագրական կարգով և ըստ դարոցի: Արվեստասեր հսկա հասարակություն մը նկատ էր դիտելու դասական ու արդի նկարիչներու ստեղծագործությունները: Օտարազգի այլ պատվիրակություններ ևս եկած էին այցելելու պատկերասրահը և կլսեին բացատրություններ իրենց բարբառով:



Հունիսի 14-ին (1954), երկուշաբթի լուսալիք առավոտուն, ժամը 2-ին, պատվիրակությունը «Մետրոպոլ» հյուրանոցն ճամբա ելավ դեպի Մոսկվայի օդանավակայանը, ուր հասավ ժամը 3-ին: Ողջերթ մաղթելու համար օդանավակայան եկած էին «Էջմիածին» ամսագրի պատասխանատու խմբագիր պրոֆ. Աշոտ Գ. Աբրահամյան, Կրոնից նախարարության կողմն՝ Նիկիտա Խվոշնովիչ Սմիռնով, Մոսկվայի հայոց հովիվոր հովիվ արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյան և քաղաքի Անդրանիկ ավագ սարկավագ Գալամբարյան:

Օդանավը Մոսկվային թռիչք առավ առավոտյան ժամը 4.50-ին և երկուրուկես ժամեն (6.35-ին) հասավ Կիև, Ուկրաինիո մայրաքաղաքը, ուր մնաց մեկ ժամ և քսան վայրկյան: Պատվիրակությունը 7.45-ին Կիևեն բաժնուկով ժամը 11-ին հասավ Բուդապեշտ՝ Հունգարիո մայրաքաղաքը, ուր մնաց մինչև ժամը 12.15, որմն ետք թռավ դեպի Վիեննա, ուր հասավ ժամը 1.15-ին Մոսկվայի ժամով, իսկ տեղական ժամով ժամը 11.30-ին: Պատվիրակությունը դիմավորելու համար Վիեննայի սովետական օդանավակայանը եկած էին Վիեննայի հայ ազգայիններեն՝ պարոնայք Հակոբ Թարյան, Ազատ Վարդյան, Հմայակ Հակոբյան և Արամ Ությունյան: Վերջինը զավակն է Վիեննայի հոգևոր հովիվ գերապատիվ Տ. Վահրամ ծայրագույն վարդապետ Ությունյանի, որ կբացակայի մայրաքաղաքն, այցի գացած ըլլալով իր դատեր, որ կգտնվի Աթենքի մեջ: Պատվիրակությունը առաջնորդվեցավ Վիեննայի «Hotel Post» հյուրանոցը, ուր մնաց հինգ օր:

Վիեննայի հայ գաղութը իր մեջ կհաշվի 30—40 ընտանիք, որոնցմն միայն մեկ—երկու ընտանիք կաթոլիկ են, մնացյալները Հայ Առաքելական Եկեղեցվո կապտկանին: Գաղութը անտեսապես ինքնաբավ է: Գլխավոր զբաղումը առևտուրն է, ընդհանրապես գորգի: Ունի մատուտ մը և դպրաց դաս մը:

որ կազմված է երիտասարդներն և երիտասարդուհիներն, որոնցից ոմանք ուսանող Ան Պետական երաժշտանոցի մեջ: Խմբավարն է պարոն Արամ Ություճյան, որ կնվագի օրգի վրա՝ Եկմայան քառաձայն: Մատուռը կազմվի շորրորդ հարկի մը վրա, ուր ամեն կիրակի և տոնական օրեր հավատացյալ հայրն դուռնադուռը կերթան հոգևորապես մխիթարվելու կենաց բանին քարոզությամբ: Գաղութիս հայերը կասրին համերաշխությամբ և սիրով, մեկ ընտանիքի հարազատներու պես: Ունին աղուժ մը, ուր կհավաքվին Արիտասարդ և երիտասարդուհիներ և կկազմակերպեն մշակութային ձեռնարկներ: Սիրտերնին տաք է Հայրենիքի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցւոյ նկատմամբ: Հարգալից վերաբերմունք ունին Վիեննայի Մխիթարյան միաբանության նկատմամբ, որուն արքահայրը բարի գալուստի և ողջերթի համար երկիցս եկավ պատվիրակության նախագահին՝ Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ՝ բարձրապատիվ Տ. Խաղարքայիսկոպոս Աջապահյանի մոտ, ընկերակցությամբ պատմաբան-բանասեր գերհարդիկի Զ. Ներսես Ակինյանի և Զ. Պողոս Պետրոսյանի: Տ. Խաղարքայիսկոպոս Աջապահյանի փոխարարձ այցելության գնաց մայրավանք, արքահոր մոտ, ընկերակցությամբ պատվիրակության անդամներուն: Տեղի ունեցավ պատշաճ հյուրասիրութուն, որմն ետք պատվիրակութունը պտտեցավ միաբանության տպարանն ու մատենադարանը:

Վիեննայի պատվական ազգայինները պատվիրակության համար վերապահած էին չերմ ընդունելութուն մը, որուն ապացույցը բազմիցս տվին պատվիրակության Վիեննա բնակիչության միջոցին: Առնոք պատվիրակության հետ մնացին միշտ և առաջնորդեցին զայն Վիեննայի պատմական և հնագիտական վայրերը: Կազմակերպեցին ճոխ ճաշասեղաններ Վիեննայի ամենեն շքեղ ճաշարաններուն թի ընտանեկան հարկերու տակ: Անմոռանալի պիտի մնա մանավանդ ողջերթի սեղանը, որ տրվեցավ վերջին գիշերը, Վիեննայի լավագույն պանդոկին մեջ, ուր հավաքված էին Վիեննայի բոլոր հայ ազգայինները հանդերձ ընտանյոք: Ասկի զատ պատվիրակութունը առանձինն հյուրասիրվեցավ պարոնայք Պարսամյանի, Սարգիս Կարապետյանի և Հմայակ Հակոբյանի տուններուն մեջ:



Հունիսի 17-ին (1954), հինգշաբթի օր, Հովհաննու Կարապետի և Աթանազիսն եպիսկոպոսի տոնին, մատուցվեցավ սուրբ ան-

մահ պատարագ Վիեննայի հայոց մատուռին մեջ, ուր ներկա էր ամբողջ վիեննահայությունը: Պատարագը մատուցց Նրուաղեմի միաբաններին և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկաղուն վարդապետ Աբրահամյան: Քարոզեց Կիլիկիո Կաթողիկոսության տեղապահ՝ բարձրապատիվ Տ. Խաղարքայիսկոպոս Աջապահյան, որ խաբրիկներ տվավ Մայր Հայաստանեն և խանդավառեց ներկա հայ հասարակությունը: Սուրբ պատարագի ընթացքին Հյուսիսային Ամերիկայի առաջնորդական տեղապահ գերաշնորհ Տ. Մամբրի արքայիսկոպոս Գալֆայան, ընդառաջելով Վիեննայի ազգայիններու փափագին, դպրության շորս աստիճաններ շնորհեց Վիեննայի դպրաց դասի անդամներուն և ուրար կրելու մասնավոր արտոնություն պարոն Կարապետ Տոնիկյանի, որ սարկավագի պաշտոն կկատարեսուրբ պատարագի ընթացքին, առանց բացակայություն:

Վիեննայի հայ գաղութը մեծապես հրճվեցավ այսքան վեղարավոր և բարձրաստիճան հոգևորականներ ունենալով իր մեջ: Վիեննայի հայ գաղութը այսքան վեղարավորներ միաժամանակ երբեք չէր տեսած Վիեննայի մեջ: Պատվիրակութունը նույն օրը, կեսօրի ետք, այցելեց Վիեննայի արքայական ամառանոց-պալատը, որ կկոչվի Շյոնբրյուն, առաջնորդությամբ գաղութի ականավոր ազգայիններուն: Պալատը ընդարձակ տարածություն վրա փռված հսկա շենք մըն է, օրուն արտաքինը եթե այնքան ուշագրավ չէ, սակայն ներքինը դրամիչ է և գեղարվեստի գլուխ-գործոց: Պալատին զանազան մասերը ունին յուրահատուկ պատմություն, կապված Ավստրիո կայսրներուն ու կայսրուհիներուն, իշխաններուն ու իշխանուհիներուն փառավոր ու արկածալից կյանքին: Սենյակները կաման անփոփոխ ու անաղարտ, ինչպես որ էին իրենց արքայական բնակիչներուն օրով: Մեկ քանի սենյակներու պատերուն վրա անխնայորեն ոսկի է գործածված, ինչպես էր պարագան Կրեմլի պալատի ինչ-ինչ սենյակներուն համար: Պալատին ետին կազմվի ընդարձակ բուրաստան մը՝ կանաչադարձ ու կամարակալ թավտաներով և անուշահոտ գույնզգույն ծաղիկներով: Վիեննայի բնակչությունը հոն կդիմե տոնական օրերուն՝ զվարճանալու և հանգստանալու համար:



Հունիսի 19-ին (1954), շաբաթ օր, Ս. Գրիգոր Լուսավորչի խոր Վիրապե ելլելու տոնին, պատվիրակութունը կեսօրի ետք ժամը 5.30-ին, տեղական ժամով, Կ. Լ. Մ.

օդանավով Վիեննայի ճամբա ելավ դեպի Բեյրութ: Մխիթարյան միաբանության արքայազնը ողջութի համար եկած էր պարոն Համայկ Հակոբյանի տունը, ուր կեսօրվան ճաշի հրավիրված էր պատվիրակությունը: Հ. Ներսես Ակինյան և Հ. Պողոս Պետրոսյան կրնկերակցեին արքայազնը: Ողջերթի համար օդակայան եկած էին Վիեննայի հայ գաղութին գրեթե բոլոր անդամները՝ իրենց տիկիններով և զավակներով: Անոնք կմաղթեին բարի ճանապարհ և միաժամանակ բարի վերադարձ դեպի Վիեննա՝ ուր այս անգամ միասին ճանապարհորդելու համար դեպի Ս. Էջմիածին՝ ներկա ըլլալու համար Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և օժան հոգեպարար արարողություններուն:

Պատվիրակությունը գիշերով անցնելով Յովուլայիտ և Հունաստանի երկինքներին հասավ Պոլիս, գիշերվան ժամը 9.45-ին, Վիեննայի ժամով, իսկ տեղական ժամով 10.45-ին: Թուրքիո Հայոց ամենապատիվ պատրիարք հոր՝ Տ. Գարեգին արքեպիսկոպոս խաչատուրյանի կողմն օդակայան դիմավորելու եկած էին գեր. գեր. Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Փափազյան և Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Գազանձյան: Անոնց կրնկերակցեին «Մարմար» և «Ժամանակ» թերթերու թղթակիցներն ու այլ ազգայիններ:

Ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը թրքական կառավարության համահաճ արտոնությամբ վարգադրած էր պատվիրակությունը 3—4 օր Պոլիս պահել՝ հյուրամեծարելու համար, բայց Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ՝ բարձրապատիվ Տ. Խաչարքեպիսկոպոս Աջապահյան շնորհակալություն հայտնելով պատրիարք սրբազան հոր այս ազնիվ վարգադրության համար՝ ցավ հայտնեց, որ պիտի չկրնա ավելի երկար ժամանակ բացակայիլ Կիլիկիո Ս. Աթոռեն, ուր ընթացիկ և վարկեր գործեր առկախ մնացած էին, և ուր հեռագրված էր, թե պատվիրակությունը Բեյրութ կժամանի հունիսի 20-ին (1954), կիրակի օր, առավոտյան ժամը 4-ին:

Պատվիրակությունը Պոլիս մնաց մեկ ժամ, որմն հոր Վիեննայի ժամով 10.30-ին, տեղական ժամով 11.30-ին, իսկ Լիբանանյան ժամով 12.30-ին, նույն K. L. M. օդանավով Պոլիսն ճամբա ելավ դեպի Լիբանանի մայրաքաղաքը՝ Բեյրութ, ուր հասավ հունիսի 20-ին (1954), կիրակի առավոտ, Ս. Էջմիածնի տունին, ժամը 3.30-ին:

Հակա բազմություն մը փութացած էր դիմավորելու պատվիրակությունը, որուն օդանավին էջր ողջուկեցավ որոտընդոստ ծափերով: Լիբանանի Նախագահ՝ Նորին Վսեմու-

թյուն Քամիլ Շամուն իր ներկայացուցիչը զբրկած էր Խաչբեի օդանավակայանը՝ իր անունով բարի գալուստ մաղթելու համար պատվիրակության պետ և Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ՝ բարձրապատիվ Տ. Խաչարքեպիսկոպոս Աջապահյանի: Լիբանանի կառավարության կարգադրությամբ ոստիկանական ջոկատ մը բարեկիցացած էր օդանավակայանի մուտքին, ուր Տ. Խաչարքեպիսկոպոս Աջապահյան օրհնեց զանոնք խաչակնքումով: Կիլիկիո Կաթողիկոսարանի և Բեյրութի ազգային առաջնորդարանի կողմն բարի գալուստի համար օդակայան եկած էր Լիբանանի առաջնորդ և Կաթողիկոսարանի տնօրեն ժողովի ատենապետ՝ գերաշնորհ Տ. Խորեն կաթողիկոս Բարոյան, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Աջապահյան, հոգեշնորհ Տ. Մեսրոպ բեղա Յոսեփաճյանի և Ազգային Կրոնական ու Քաղաքական ժողովներու ներկայացուցիչներուն:

Հազիվ կարելի եղավ պատվիրակության անդամներուն համար ճամբա բանալ և թափոր կազմել դեպի Հայոց Կաթողիկոսարանը, Անթիլիաս: Մայր Տաճարի զույգ զանգակներու զվարթ ղողանջներուն տակ թափորը մոտք գործեց Կաթողիկոսարանի դուռնին ներս, ուր հավաքված էին բազմահարյուր կարոտաբաղձ հայեր: Կատարվեցավ կարճ գոհաբանական աղոթք և թափորը «էջ Միածինն ի Հօրէ» շարականի շեշտերուն տակ ուղղվեցավ Վեհարան, ուր խոսք առավ պատվիրակության պետ և Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ՝ բարձրապատիվ Տ. Խաչարքեպիսկոպոս Աջապահյան՝ շեշտելով պատվիրակության ուղևորության նպատակը դեպի Ս. Էջմիածին և տալով խարթիկներ Մայր Հայաստանեն: Հակառակ երկար ճանապարհորդության պատճառով հոգնության և անքնության՝ Տեղապահ սրբազան հայրը սիրով ընդունեցավ իրեն աջահամբույրի մտեցող հավատացյալ և հայրենաբաղձ իր զավակները և անոնց բաշխեց առատաձիր օրհնություն Ս. Էջմիածնին, ալիփառ Արարատեն ու քառազարթ Արազածին:

Առավոտյան ցուրբրուն տակ հայրենաբաղձ հայրորդիներ Վեհարանեն իջնելով մտան Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը, ուր սկսած էր մատչիլ առավոտյան ժամերգություն և սուրբ պատարագ: Քարոզեց Ամերիկահայոց առաջնորդական տեղապահ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան, պանծացնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը անցյալին և ներկայիս: Հավարտ սուրբ պատարագ վատարվեցավ Հայրապետական մաղթանք՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տունին առթիվ:

Պատվիրակությունը հանձն առավ այս երկարատև ուղևորությունը շատ տխուր առիթով մը. անիկա սակայն ծանրագույն սուգին հետ արժանացավ խանդավառ և հուսադրող ապրումներու Մայր Հայրենիքի հողին վրա, և իր հետ բերավ մեր Հայրենիքի և ժողովուրդի վերածաղկող կյանքին ոգևորիչ իրականության ավետիսը: Ատոր համար սուգի առընթեր փղավ բաները ուրախու-

թյան: Այդ իսկ պատճառով կարելի է Սաղմոսերգուի հետևյալ բառերով վերջացնել մեր այս համառոտ ուղևորական նկարագրությունը.

— «Ընդ երեկոյս հանգիցեն յալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն»:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կարողիկոսության Հայոց Կիլիկիո, Անրիլիս, 1954 թ., հուլիս—օգոստոս, № 7—8)

